



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ**

4 նոյեմբերի 2011 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/1-Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍԻ

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 43 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի քաղաքապետի պաշտոնակատար Տ. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Ստեփանյանը, քաղաքապետի մամլո քարտուղար Շ. Մարդարյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը, աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը, աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Գևորգյանը:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Տ. Մարգարյանը Երևանի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 4-ի նիստում ներկայացրեց Երևանի նախկին քաղաքապետ Կ. Կարապետյանի 2011 թվականի հոկտեմբերի 28-ի դիմումը՝ Երևանի քաղաքապետի պաշտոնից հրաժարական տալու մասին և 2011 թվականի հոկտեմբերի 31-ի դիմումը՝ Երևան քաղաքի ավագանու անդամությունից հրաժարական տալու մասին:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Տ. Մարգարյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 4-ի արտահերթ նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ - Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրությունների ժամկետը սահմանելու մասին:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Ս. Մարգարյանն առաջարկեց Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրությունների օրը սահմանել 2011 թվականի նոյեմբերի 15-ին, ժամը 11.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ-43
դեմ-0
ձեռնպահ-0

Որոշումն ընդունվեց միաձայն

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ